ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 05.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/46

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) հաշվի առնելով «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 28.03.2018թ. ներկայացված՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.03.2018թ. թիվ 5 որոշմամբ հաստատված պայմանագիր կնքելու մասին որոշումը, «Պրոմ-Տեստ» ՍՊԸ-ին հաղթող մասնակից ճանաչելու մասին որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները՝ Ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով դադարեցնելու, ինչպես նաև 21.03.2018թ. թիվ 4 արձանագրությամբ ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը դադարեցնելու պահանջի մասին բողոքը և հիմք ընդունելով Խորհրդին ուղղված՝ ԳԲԽ-ԱՄ-2018/46 բողոքն առանց քննության թողնելու մասին «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի 03.04.2018թ. գրությունը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 21.04.2017թ. «Հայաստանի Հանրապետության

գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 1 որոշման 45-րդ կետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ե Ց

«Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ի կողմից 28.03.2018թ. ներկայացված բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**